

ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԳՐԱԿԱՆ . — ԲԱՆԱԾՈՒՐԱԿԱՆ . — ՎԱՏՄԱԿԱՆ .
ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

1843-1896

ՀԱՏԱՐ ԵՒ

ՅՈՒՆԻՍ

ՓԱԽՍՏՈՍ ԲԻԻԶԱՆԴ

ԿԱՍ

ՍԿԶԲՆԱԽՈՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ

(Շարունակութիւն տես յ'էջ 193)



Ինչպիսիական եկեղեցւոյ գոյութեան
և կենաց պատկերն՝ ստուգիւ իրեն յա-
տուկ բնաւորութեամբ մի կը ներկայա-
նայ մեզ, որ և զգալի կերպով կը տար-
բերի ապագայ վիճակէն։ Եւ այս բանիս մէջ
կը գտնենք երաշխաւորութիւն մի արժանա-
հաւատութեան այն աւանդութեան, որ երկար
ժամանակ մոռցուած էր անհողութեամբ։

Հայկական եկեղեցին կը պարծի, թէ իւր
հիմնադիրներն մահկանացու մարդիկ չեն ե-
ղած և ո՛չ առարեալք, այլ նոյն ինքն Քրիս-
տոս։ Այս բանս կը հաստատէ նա՛ հիմնուած

Ագաթանգեղոսի պատմութեան վրայ¹։ Ս.
Գրիգոր կը պատմէ վաղարշապատ մայրաքա-
ղաքին նորադարձ ժողովուրդեան՝ իրեն երեցած
զարմանալի տեսիլը և կը տեսնէ նա երկինքը
բացուած, և Որդին Աստուծոյ՝ որ երկնաւոր
զօրաց հետ կ'իջնէ, և սկիռ ուռամբ կը բախէ
գետինը։ Յետոյ կը տեսնէ քաղաքին մէջ
տեղը՝ արքունի պալատին մօտ՝ ոսկեղէն

1. A (= Agathangelos Ausgabe v. Titlis 1882)
CII ff. S. 427 ff. — G (= Agathangelos neu heraus-
gegeben von Paul de Lagarde. Abh. d. Gött. G.
d. Wiss. phil. hist. Cl. 1888, 35 S. 1 ff) § 111 ff.

խարսխի մի վրայ բարձրացած հրեղէն մեծ սիւն մի. նորա խոյակն ձեւացած էր ամպեւրէ, որոյ վրայ կը փայլէր լուսածածանչ խաչ մի: Կը տեսնէ դարձեալ ուրիշ երեք հաւառար սիւներ, բայց աւելի ցածք և արեան պէս կարմրագոյն խարսխաց վրայ հաստաւ տուածք երեք տեղեանց մէջ, ուր նահատակեցան կուսանքն՝ Գայիանէ, Հռիփոիմէ և առնոց ընկերքն: Եւ այս սեանց վրայ կը բարձրանայր կամարակապ ամպեղէն խորանաձև զմբեթ մի: Եւ այս զմբեթին գաղաթը կայր Աստուծոյ աթոռն իւր բոցափայլ խաչով, որ կը սփռէր իրեն համատարած լոյսը և պայծառութիւնը:

Այս արևելեան կրօնական երևակայութեանց կամ տեսլեանց նպատակն ամենապարզ է. և սակայն ընդարձակ մեկնութիւն մի կը յաջորդէ տեսլեանն¹. « Առաջին խաչն, որ ցուցաւ քեզ, ունի զպարծանս քահանայութեան պատուին, պանծացեալ ի խաչն Քրիստոսի: Իսկ երեք ևս՝ որ ունին զսեղն վկայութեանցն հանգստի սրբոցն, զի ի տեղւոյ հեղման արեանն իւրեանց շինեցին հանգստի վկայարանք ոսկերաց իւրեանց: Իսկ զի բարձր է սիւնն առաջին, զի մեծ է բարձր է պատիւ կաթողիկէ եկեղեցւոյ քան զամենայն սրբոցն...: Եւ ի վերայ կատարոյ շինուածոյն զոր տեսանես, նոյն ինքն աթոռ ամենազօր բնութեան աստուածութեանն ինքնութեան. զի նա ինքն զլուսն է Եկեղեցւոյ սրբոյ »: Թեոյ, ըստ երկնաւոր ծրագրին՝ զոր ցըցուց կամ զծեց ինքն Քրիստոս, կը շինուին զխաւոր եկեղեցին² և կուսանաց վկայարանք:

Այս պատմութեան ամենամեծ նշանակութիւնն յայտնի կ'երևի: Հին արքայաշինութեան վաղարշապատ քաղաքն այնուհետև Հայաստանի հոգևոր մայրաքաղաքը կը դառնայ. բայց հայկական Հոռօմէն չեղաւ յաւերժական ոստան (urbs aeterna): Ապագայ փութորկա-

լից կռիւներու միջոց՝ կաթողիկոսն Թողուց քաղաքը, և յետ այլևայլ պանդխտութեանց՝ յամին 1441՝ դարձեալ նոյն սրբազան տեղւոյն մէջ հաստատեց իւր աթոռը, ուր կայ մինչև ցայժմ: Ներկայապէս Էջմիածին կը կոչուի, ի յաւերժ յիշատակ այն աւանդութեան՝ թէ ինքն Քրիստոս հիմնադրեալ է հայկական եկեղեցին և հաստատեալ է նորա ինքնագլխութիւնը (αὐτοκεφαλία), իրեն բացարձակ անկախութիւնը ո՛ր և է արեւելեան և արևմտեան պատրիարքութեան:

Արքայապետի քրոջ խմբագրութեան մասին Գուշտիկի¹ ըրած ուսումնասիրութեամբ ցուցուած է արդէն յայտնապէս, թէ իրեն քաղած մասն՝ իբր Տեսիլ կամ Յայտնութիւն Գրիգորի, և որուն վրայ հաստատուած է հայկական եկեղեցւոյն աստուածային հիմնարկութեան բովանդակ աւանդութիւնն, ի գաղաթը կը պատկանի: Գրուած է վաղարշապատցի քահանայէ մի՝ ի պարծանս այն տեղ զոյգութիւն ունեցող եկեղեցւոյն, և այնպիսի ժամանակին մէջ՝ յորում սկսեալ էր Յագիկոսթն հալածանքն, ուստի և 451—456 տարիներուն մէջ: Ստոյգ պատմական աղբիւրն, որ է՝ Վարդ Ս. Գրիգորի կոյուածն, բնաւ եկեղեցական պատմութեան այս հիմնական կետի վրայ յիշատակութիւն չընէր: « Դիտեալու արժանի է, կըսէ Գուշտիկի², նորա բացարձակ լուսութիւնն Գրիգորի գործոց մասին ի վաղարշապատ՝ կաթողիկոսութեան աթոռոյն վրայ »: Կը բացատրէ նա զայս՝ այն տեղեկութեանց զաւառական յատկանիշով, ըստ որում՝ հարաւ—արևմտեան Հայաստանի կը պատկանէին³: Սակայն այս բանս չէր պատ-

1. Kl. Schr. III. S. 395 ff.

2. Նոյն, անդ. էջ 382.

3. Kl. Schr. S. 382. — Այս բանս սխալ է. վասն զի Գրիգորի առաջելութիւնն ամփոփուած չէր միայն, այս տեղեկութեանն կամեմատ, նաեւ և արևմտեան զաւառաց կամար, այլ հաստատապէս արևելեան կաթողիկոսի կողմերը ի նկատի առնուած էին: Իսկ թէ յայտնապէս նշանակուած են իոյ երկու տեղերուն տեղը և թուականը, այս բանն իրեն առանձին պատճառներ ունի: Երկու տեղերն են, որոնց մէջ բաշխեց Գրիգոր Յովհ. Մկրտիչ և Ամանագիւնեայ նշխարները, զորս կենսաբոցն ընդէր էր. պարհն է: Ստորաջամ Տարօնց մէջ, և ի Ռազուան (Դիցուան) Ռազուանցայ մէջ: Առաջին տեղը կը կոտարուէր յ' Մամիկ, երկրորդին՝ Կառապարզ 1ին, յորում ի պատիւ դիցն Ամա-

1. Agath. A. S. 435 = G. § 117. — Իսկ ազգ. վեհակ. 1863, էջ 562—5.

2. Ս. Գրիգոր նոյն պահուստ ասկաւնի եպիսկոպոս ձեռնադրուած չինելով, այն տեղը՝ ուր վերջը մայր հեկեղեցին պէտք բարձրանայր՝ պարզ խաչ մի կը կանգնէ պարսպապատ:

ճառը, որովհետև Դ զարուհ մէջ վաղարշապատ չէր Հայաստանի հոգեւոր մայրաքաղաքը, այլ Տարսնոյ Աշտիշատ քաղաքը՝ հաւաքային Հայաստանի մէջ։ Այս քաղաքին սրբութիւնը, որ մայր եկեղեցին էր և Հայաստանի հոգեւոր կեդրոնայալը, այնչափ նուիրական էր և եղական, որ նոյն նշանակութիւնը չունէր վաղարշապատ, դեռ այն ժամանակ բոլորովին զօրկ լինելով հոգեւոր կամ սրբազան յատկութիւնէ։ Ինչպէս որ Տարսնոյ գլխաւոր քաղաքն՝ իրեն հռչակաւոր երեք մեհնից պատմաւաւ, որոնք նուիրեալք էին առ վահագն (Հերակլէս)՝ սպանիչն օձից (փշապաքաղ, *δρακοντοκτονητης*), առ Ոսկեմայրն Անահիտ և առ Աստղիկն (Ափրդիւտէ), հեթանոս քրմաց գլխաւոր կեդրոնատեղին եղեր էր. այսպէս նաև Գրիգոր կործանած մեհնից տեղը կանգնեց Քրիստոսի եկեղեցին՝ և քրիստոնեայ Հայաստանի կեդրոնը բոլոր զայն։ Այս բան կը հաստատուի փաւստոսի բազում վկայութեամբք։

Նորայ (Գիտ. Գ. Ժ. Էջ 56. «*ի մեծ և նախ (զ) առաջին եկեղեցին մէջ*») ուրախական նանդաբ և բաւարարչի պաղոց յիշատակը։ Իրաւամբ ապա այն նշխարներն, որոնք յատուկ զօրութիւն մ'ունէին պաշտպանելու ընդդէմ դիւց, երկրին տանելուն նամար բաշխուեցան գլխաւոր կեդրոններուն մէջ։ Քրիստոնեական նոր տաներն սկսեց էին լարածի ժողովրդական զիջ նուիրեալ հին ազգային տաները։ Ստուգի, բաւ վաւարական փաւստոսի, հին ժամանակները ասանք էին երկու գլխաւոր տաները։ Աշտիշատի մասին տես վերև էլ Էջ 244. Բազմաւանի նանդան կը կատարուէր միշտ ի հէտ նոյն զարուհ՝ խուռնիցաց բազմութեամբ շուրջակայ ժողովրդաց և ներկայութեամբ շատ եպիսկոպոսաց և երկու նուիրեալաց կաթողիկոսին (Փաւստ. Գ. Ժ. Էջ 244)։ Թերեւս տեսիլ աչ ժամանակ փաւստոսի եղած լինի վաղարշապատի նախնականութիւնն կամ մերցունքն։

1. Բաւ նա Սալաթանդիգոսի, ձծի (ապքը) Վե. Նուս.՝ 1862, Էջ 610). եկեղեցւոյ հիմնուելը կը զնէ Գրիգոր և կը կանգնէ սեղան մի քաւար քրիստոսի։ «Զի նախ անց արար սկիզբն յինչոյ եկեղեցեաց, և ուղղել սեղան յանուն Սուրբ Երրորդութեան և կապմել աւազան մկրտութեան»։ Յոյնը կ'ըսէ, թէ նախ կանգնեց սեղան մի «*εν ονόματι τῆς δεσπνης τῆς θεοῦ*»։ Եղաւ ընթերցանք և նա, «*սեղան փաւստոսի*» և ոչ «*Քրիստոսի*»։ Ուստի կը հաստատէ, թէ շատ սեղաններ (Θυσιαστήρια, իսկ Ա. սեղանի) կանգնել և «*εις δόγμα του Χριστού*»։ Մինչդեռ նոյն ունի «*յանուն Սուրբ Երրորդութեան*»։ Այս անգ ինձ թուի թէ յայնի պատճի և ինչը ընդարկել իմաստը, իսկ նայելէն խաղաղութիւն է. վանդի փաւստոս այլ (Գ. Ժ. Էջ 36) կ'ըսէ. «*Զի յառաջ նախ անց յինչաւ էր զտարբ եկեղեցին, և ուղղել սեղան յանուն Տիանի*»։

2. Հմտ. փաւստոս Գ. Գ. Էջ 7. «*ի մեծ յառաջին մ'այրն եկեղեցեացն Հայոց՝ որ էր յերկրին մե-*

Սոփրաբար կը կոչուի նա՝ մեծ և առաջին և մայր բոլոր Հայաստանի եկեղեցեաց, որ և կը գտնուէր Տարսն երկրին մէջ։ Ուրիշ տեղ կ'ըսուի. «*Նախ և (զ) առաջին և զըլխաւոր տեղին պատական, զի յառաջ նախ անց յինչաւ էր զտարբ եկեղեցին, և ուղղեալ սեղան յանուն Տիանի*»։ Էր կոչուի նաև այլուր. «*Գլխաւոր տեղան, աթոռ իշխանութեան հայրապետացն*»։ Տեղացն պաշտպան սրբոց տօնն, որ է՝ Յովհաննու կարապետի և Ալմանագինեայ, զոր Ս. Գրիգոր պատուիրէր էր կատարել ամէն տարի յ'7 Սահմի, Հայաստանի ամենամեծ տօնէրէն մին էր. «*Քանզի այնպէս իսկ քաղաքն էին եպիսկոպոսապետքն Հայոց, հանդերձ թագաւորքն և մեծամեծօքն, նախարարքն*»։

բուն»։ Գ. Ժ. Էջ 56. «*ի մեծ և նախ (զ) առաջին եկեղեցին մ'այր եկեղեցեացն ամենայն Հայաստանեայց*»։

1. փաւստոս Գ. Ժ. Էջ 36.

2. փաւստ. Գ. Ժ. Էջ 37.

3. Դիտելի է, թէ այս մեծ տօնախմբութիւնն կը կատարուէր հարաւային Հայաստանի քաղաքներէ միոյն մէջ։ Այս բանին պատճառն այն է, որ ղեկ Դ զարուհ առաջին կիսուն նարաւային Հայաստանի քաղաքական ամենամեծ կարեւորութիւն ունէր քան զմերը։ Տիրան թաւառին (326-357) ընդհանրապէս նարաւային կողմերը կը ընկալէ, ինչպէս Մովսէս զաւարին Բնարից բերին մէջ (Փաւստ. Գ. Ժ. Էջ 32), և կամ Աղմկեաց Բառաշէլ առանին մէջ (Փաւստ. Գ. Ժ. Էջ 39)։ Անգղի և Բնարից բերեցին՝ աքցունի Գալատիան (Գալատ. Գ. Ժ. Էջ 244)։ Անգղի բերեցին մէջ՝ բաց ի գանձերէ՝ կային նաև շատ թագաւորաց յերկրին. — ամենք միապետաւ Տիգրանայ զերի ըսեալ թագաւորաց (Strabo XI p. 532 C). Գերեզմանները կարծեցին, սակայն սուրբիւ արշակունի թագաւորաց կ'ընէին «*արանց արշակունեաց*» (Փաւստ. Գ. Ժ. Էջ 146)։ — Յատկապէս նարաւային զաւառաց նախարար կ'ընէին միշտ թագաւորին շուրջը, ինչպէս ևն Բնարից Աղմկեաց, Իշխանին Մեծ-Մովսէս, Մովսէս-Շառնուց, Անանայ և Հայանինց։ Յիշուի զարմանալի է այս բանն, որովհետև յիշեալ նախարարութիւնը (Ի բաց առեալ Աղմկեաց զաւառաց), յետոյ իւրաքանչեւ նախագի Զորբոր Հայրէ կը կապմնէ. և յամին 297 հաստատու խաղաղութեան դաշնից մէջ կ'որոշուի՝ որ Անգղեցեաց և Մովսէ Հաղմկեցեաց մեղքը անցնին։ Պրոպոլիտո կ'ուսանել, թէ ինչոք ժամանակային «*Նախարարաց*» կառավարութիւնն խաղաղութեամբ տեսցայ այս նախագիտեան մէջ, նոյն իսկ իւրաքանչեւ արաւապետութեան միջոց, մինչև Զննորի կայսերութեան ժամանակ։ Անոց իւրաքանչեւ կայսերութեան զաւառաց լինելու նշանն էր՝ իշխանական շէնք զգտաւոր արշաւութիւն (Procop. de aedif. III, I S. 24). Ինչպէս էր նաև Իրեթրի մէջ (τόν δὲ ἱερῆς βασιλείας βασιλείας τῆς οὐκείας βασιλείας τῶν σύμβολα Ῥωμαίων ὁφείλει. F. H. G. IV S. 189)։ Սակայն, իւրաքանչեւ պետութեան կայսերական լինելով՝ ապառ չէին նախ թագաւորին կայսերականութիւնէն, որ նոյնպէս Հաղմկեցեաց գերիշխանութեան ներքև աւառական էլիան մ'էր։ Սոյնպիսի կրկնակ առնչու-

և աշխարհախումբ բազմութեամբ պատուել չնոյն տեղիս, որ յառաջ էին տեղիք պատկերաց կողմն, և ապա յանուն աստուածութեանն սրբեցան, և եղեն տուն տղօթից և տեղի ուխտից ամենայն ումեք: Մանաւանդ յայն ի գլխաւոր տեղին յեկեղեցին ժողովել ի յիշատակ սրբոցն՝ որ էին անդ, կատարեց անց ամի ամի եռքն անգամ¹»: Ինչպէս յայտնի է, այս տեղ խօսքը ազգային ամենամեծ սոնախմբութեան մի վրայ է, որ Հայաստանի ժամնէն աւելի սրբազան տեղոյն մէջ կը կատարուէր: Եւթն անգամ կատարելու սովորութիւնն անշուշտ հեթանոսական աւանդութեմէ մի առեր է իւր ծագումը: Արդ ո՞ր է խոհական և անկողնաւոր ընթերցող պիտի տեսնէ, թէ Աշտիշատու այս եկեղեցական շքեղութիւնն յայտնապէս կը հակադասի Վաղարշապատու զրոյցին կամ աւանդութեան:

Աշտիշատը՝ եկեղեցական կեդրոն լինելով նոյնպէս ժողովներու գումարման գլխաւոր տեղն էր: Ներսէս կաթողիկոսին հրամանաւ «ամենայն եպիսկոպոսունք Հայոց աշխարհին ժողովեցան ի գիւղն Աշտիշատ, ուր զառաջինն զեկեղեցին էր յինեալ²», եւ առ էր մայր եկեղեցեացն, և ի տեղի լեւել նախնեացն ժողովոց սինհոդոսն³»: Յետոյ երբոր արքունի տան հազարապետն (Հայր մարգարէն) կը սպառնայր եկեղեցական ընդարձակ կալուածները յարուճիս գրաւել, Ներսէս կ'ըսէ իրեն. «Տէր մեր Յիսուս Քրիստոս, որ ընտրեաց նախ զայս տեղի՝ դնել զանուն իւր աստ... պատուիրեաց մի՛ ամենեւին յայլոյ ինչ ակն դնել կամ ցանգալ⁴»: Այսպէս անա յայտնի կը ածնուի, թէ տակաւին Դղարու կիսուն շատ սակաւ ծանօթութիւն կայր Վաղարշապատու օծութեան մասին, այնպէս որ Ներսէս զՔրիստոս կը համարի հիմնադիր մայր եկեղեցւոյն⁵:

Փաւստոսի ուրիշ երկու տեղիք աւելի կարեւորագոյնք են: Կը յիշատակէ նա յանուանէ Հայաստանի սրբազան տեղերը¹. ա. Մայր եկեղեցին՝ հանգերձ գերեզմանաւ առաքելոցն. բ. Թորգան, ուր էր Լուսաւորդին գերեզմանը. և վերջապէս՝ գ. «ի գաւառն Ալուարատեան, ուր նախապէս Բրիտտոսի՝ Գայիանէ և Հովսիսի կային (կեցին), իրեանց հանգերձ գործակցօքն»: Ապա ուրեմն ծանօթ են փաւստոսի՝ Վաղարշապատու մէջ գտնուած նահատակքն կամ սրբուհիք. սակայն կաթողիկոսանիստ եկեղեցւոյ մասին՝ որ ապա կը գերազանցէ քան զամենայն եկեղեցին Հայաստանի՝ զեռ ամենեւին տեղեկութիւն չունի: Երբոր Յուսիկ կաթողիկոս ձեռնադրուած եւ պաշտօնակալէն դարձաւ, թագաւորն և անթիւ բազմութիւն ժողովրդոց ընդ առաջ գացին և ողջունեցին զինքը. և յետոյ «մտեալ ի քաղաքն մեծ յԱրաշատ, յեկեղեցին դառնային, և նստուցանէին զցանկալի մանուկն Յուսիկ յաթոռ հայրապետական²»: Ապա ուրեմն յԱրաշատ էր հայրապետական արժան և ո՞չ Վաղարշապատ:

Հարկ է յիշեցնել, թէ մինչև Ներսէս կաթողիկոսի մահը՝ հայկական եկեղեցին կախումն ունէր Կեսարիայէն: Իսկ արդ բոլորովին իրարու հակառակ ենթադրութիւնք են, հրապատակութիւն մետրապոլիտական իշխանութեան և ուղղակի աստուածային հաստատութիւն: Ապա ուրեմն հաւանականաբար՝ այն ժամանակ միայն հնարուեցաւ Վաղարշապատու զրոյցն կամ աւանդութիւնն, երբոր ի սպառ ընդհատեցաւ Կեսարիոյ հետ ունեցած յարաբերութիւնն: Այս բանիս հետ ամենայն կերպով կը համաձայնի մեր յառաջագոյն ապացուցած առաջարկութիւնն, թէ քրիստոնեայ Հայաստանի նախկին ժամանակաց մէջ եկեղեցական կեդրոնն չէր Վաղարշապատը՝ այլ ուրիշ տեղ մի, մինչդեռ նա իւր սրբոց տեղական պաշտամամբ միայն ծանօթ էր: Հետեւաբար Եղարու մէջ կուսակցական ոգւով հնարուած և առանց ո՛ր և

Թիւնեք զպոլութիւն ունէին նոյն ժամանակները ուրիշ կողմերէս, ինչպէս ի Գամաակուս և հռովմէական Արքայիս նաւանդին մէջ, և այլն: Հմմտ. Mommsen, Röm. Gesch. V S. 476 Anm. und 486.

1. Փաւստ. Գ. Դ, էջ 7.

2. Փաւստ. Գ. Դ, էջ 76.

3. Փաւստ. Գ. ԺԴ, էջ 118.

4. Կենթադրուէ՝ յԱւախատ գտնուող եկեղեցւոյն: Կ. Թ.

1. Փաւստ. Գ. ԺԴ:

2. Փաւստ. Գ. ԺԲ, էջ 30.

է պատմական արժէքի զրոյց մ'է այն, յորում կը պատմուի Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռքով հայկական ազատ ինքնապաշտպանութիւնը հաստատութիւնն:

Մինչդեռ, ընդ հակառակն, պատմական փաստերով ապացուցուած ճշմարտութիւն մ'է հայ եկեղեցւոյ միւս պարծանքն, թէ Հայաստանն առաջին երկիրն եղբէր է՝ որ ընդունեալ է քրիստոնէական կրօնքը, հռովմական կայսերութենէն շատ յառաջ: Սակայն պիտի սխալի մէկը եթէ կարծէ, թէ նոր կրօնքն իսկոյն ընդունելի եղաւ նաեւ հասարակ ժողովրդեան մէջ, մինչ ընդ հակառակն մուսուլման նա բարձր իշխանութեան կողմանէ և բռնութեամբ: Բնաւ նորա հետ կապուած չէր ո՛ր և է հոգեւոր կամ՝ սնտեսական ազատութիւն: Գ. և Գ. Կարուց Հայաստանն պարզապէս աստատական իշխանութիւն մ'էր, ճիշդ մի և նոյն կերպով կազմակերպուած, ինչպէս էին երկու զրացի երկիրներն՝ Կապադովիա և Պոնտոս՝ նախ քան իրենց հռովմական նահանգ դառնալը: Բաց ի դուրս, պատեքադմաստէր և անկախ ազնուականութենէ մի, կայր նաեւ Հայաստանի մէջ ամենածոխ քահանայական դասակարգ մի, որուն պատկանող ընդարձակ կալուածները կը մասակարարէին բազմաթիւ սպասաւորք (επαυλαιοι): Թուի թէ դիրին եղաւ շահի ազնուականութիւնը ի նոր հաւատս Բիւստոսի¹. Տրդատայ նման իշխան մի, որ ամենայն ասպետական ձրիք և առաքինութեամբ օժտեալ էր և միանգամայն օտարին լծէն ազատեալ էր իւր հայրենիքը, պէտք էր զարմանալի ազդեցութիւն մ'ընէր այն անկիրթ՝ բայց քաջասիրտ մարդկանց վրայ. այս պատճառաւ ազնուական դասակարգն այլ առանց դժուարութեան հպատակեցան նորա գերիշխանութեան: Նոր կրօնքին քան զամենաւելի յամուտութեամբ ընդդիմացան քրմերն, որոնք թէ՛ լաւ կազմակերպուած էին և թէ՛ հմուտք էին կռիւներու: Սակայն այս զեպքս մէջ շատ խոհականութեամբ և յատուկ

զրութեամբ մի կը զործէին թագաւորն և Գրիգոր: Զոր տեղ քրմերն պաշտպանեցին իրենց զիրենք, օգնութեամբ մեհենից սպասաւորներուն, իրենց սրբազան և պատնիշափակ ամրոցաց մէջ: Բոլորն այլ կարգաւ կործանեցան հիմնայատակ. մեհեններն տապալեցան, և նոցա տեղ եկեղեցիներ կանդնեցան, և քուրմերու կալուածներն անցան քրիստոնէայ քահանայից, որոնց վրայ արիւնք ևս աւելցուց թագաւորն առատաձեռնութեամբ:

Երկու մկրտութիւնք խուռն բազմութեան ժողովրդոց՝ պսակեցին զործը: Յայտնապէս մասնաւոր նպատակներ ունէր թագաւորն՝ քրիստոնէայ կղերը բարձրացնելուն և ճախացնելուն մէջ, որ լատ ամենայնի հեթանոս քրմաց քաղաքական զրութիւնը ստացաւ: Այստեղ կը դիտէր նա հակակիւռ մի գնէր բուռն զօրութեան ազնուականաց, զոր բոլորովն ընկնեց և սկսեցաւ միապետութիւնն, Երկու առաջին սերնդոց միջոց, Տրդատայ և իւր խորով որդւոյն թագաւորութեան ժամանակ, սոյն քաղաքականութիւնն առանց ընդդիմութեան յաշոգութիւն ունեցաւ: Այս պայմաններու մէջ հաւանապէս է այն եկեղեցւորութիւնն, թէ երկրին քրիստոնէութիւնն շատ վերիվերոյ էր, և թէ այն ընդհանրապէս տարածուեցաւ միայն իշխող տարերաց մէջ, որ է՝ ազնուականաց և քահանայից դասակարգերուն մէջ, և այս բանս ստուգիւ իրականութիւն է:

Նոյն իսկ երկրին սրբազան կեդրոնին մէջ յԱշտիշա՝ գեռ խոր արմատներ ձգեալ հեթանոսութիւնն: Երբոր վրթանէս, Գրիգորի որդին և երրորդ ինքնակալն, իւր հօր շինած եկեղեցւոյն մէջ կը կատարէր աստուածային պաշտօնը, ծածուկ կերպով կը միաբանին այն ամէնքը՝ որոնք մինչև նոյն ժամանակները պահեալ էին իրենց հին կապաշտութիւնը¹, զրեթէ երկու հազար մար-

1. Կ'ըսէ Ազանթանգեզոս (ՃԺԺ, յէջ 610, հրատ. Վենետիկ). «Նախ զպետիկ լուսաւորեաց մկրտութեամբն՝ որ ընդ իւրն էին մշտնապէս առաջադրէր, որ ընդ նմայն երթնալ էին ի քաղաքն Կեսարացոց»:

1. Փաստ. Գ. Գ. էջ 7. «Որք միանգամ զնուութիւն կապաշտութեան և հեթանոսութեան գնդն սովորութիւնն մինչև ցայժմս՝ ևս ունէին զազանք, ի մի միաբանութիւն ժողովալք՝ հաստնէին իւրեւ հազարք երկու, խորուրդ եղեալ ընդ միմեանս՝ սպանանէլ զքահանայապետն Առուծոյ զՎրթանէս»:

դիկ, հայրապետը սպաննելու համար՝ Այդ մարդիկը բոլորն այլ հեթանոս քրմերու ընտանեաց կը պատկանէին և նոցա կուսակիցը էին։ Ապա շատ իմաստութեամբ գործեց Գրիգոր, երբ պարսպապատ ամրացուց սրբազան տեղերը թէ՛ քաղաքաց և զիւրից մէջ, և թէ՛ զղեկաց և զաշաաց մէջ¹։ Հեթանոսը զայրացած կը յարձակին « և հաւտեալ պատէին զմեծ քաղաքորմն եկեղեցւոյն Աշտիատու² »։ Բայց հրաշից ազդեցութեամբ չեն կրնար բռնել զՎրթանէս, և վերջապէս օսէնքն ալ քրիստոնեայ կը դառնան և կը մկրտուին։ Մակայն շատ տարօրինակ բան է, որ մասնաւորապէս կանայք են հին կրօնքին պաշտպանք կամ կուսակիցք։ Աշտիատու ապստամբութեան զիւարէս և ծածակ պրք-գոխն էր Խորարովի կինն, « մեծ տիկինն Հայոց³ »։ Նոյնպէս փառանձեմ թագուհին, Պապ թագաւորին մայրն, զիւաց նուիրեց իւր զաւակը, « քանզի անօրէն մարդ⁴ էր և ամենին յԱստուծոյ ոչ երկնչէր⁵ »։ Թե՛ և քահանայք բոլուն կերպով կուռեցան և ջանացին վերցնել հեթանոսական սովորութիւնները, և մասնաւորապէս մեռելոց համար ըրած անվայել կոծը և ողբերը, սակայն նոքա դեռ ապագայ ժամանակաց մէջ այլ շարունակուեցան։ Յամին 378, Մամիկոն նեանք իրենց ազգատունի քաջ սպարապետին Մուշեղայ մարմինը առնելով, « հանին զիկն ի տանիսն աշտարակի միոյ. ասէին՝ թէ վասն զի այր քաջ էր, աղբազ իջանեն և յարուցանեն զգա⁶ »։ Թե՛ որչափ խոր կերպով հեթանոսութիւնն արմատացեր էր մասամբ Հայաստանի մէջ, կը հաստատուէ մեզ Էդրեան պատմութիւնն, որուն համեմատ՝ զեռ Եր դարու առաջին քառորդին՝ հարկ ե-

ղաւ որ Ս. Մեսրոպը Գողթն գաւառէն արմատախիլ ընէ հեթանոսութեան վերջին մընացորդները¹։ Նոյն իսկ Դ դարու առաջին կիսուն՝ հեթանոս կրօնքն զեռ իրեն ազդեցութեան մէջ էր. և թէ՛ որչափ սակաւ մնալ գտեր էր քրիստոնէութիւնն ժողովրդեան բազմութեան մէջ, կը վկայէ մեզ փառաբան խիստ բառերով՝ Տիրան թագաւորին (326-337) կառավարութիւնը նկարագրելու միջոց²։ Ժողովուրդն բալորովին օտարացեր էր քրիստոնէական կրօնքէն, իրենց թագաւորին օրինակին հետեւելով, որ եկեղեցւոյ ոխերիմ թշնամի էր. վասնզի քրիստոնէութեան առաջինը միայն ընդունեց էին արտաքսաւան և կը համարէին զայն իւր մարդկային կրօնք մի և « մշրտութիւն իմն մարդկութեան »։ Ճշմարիտ քրիստոնեայք միայն նոքա էին, որոնք կարող էին « հեղլէն կամ ասորի զբարութեամբ » գրուածները կարգաւ. իսկ արդ ազնուականութեան կամ նախարարաց մեծամասնութիւնն, ինչպէս նաեւ խառնազանձ բազմութիւնն և շինականք, զօրկ էին այս գիտութենէս։ Չորս տեղ վարդապետք « իւրեւ զյորդանեղեղ անձրեաց սատկութիւն՝ զվարդապետութիւնն (հաւատոյ) ի վերայ հոսէին զցայգ և զցերեկ. ոչ ոք ի նոցանէն և ոչ մի բան, և ոչ կէս բանի, և ոչ զոյգն յիշատակ, և ոչ նշմարանս ինչ զոր լսէինն, և ոչ կարէին ինչ ունել ի մտի »։ Վասն զի անոնց սիրտն, ինչպէս Պատմիչն տրամշելով կ'ըսէ, « ընդ անպիտանս և ընդ անգոտս և եթ զբօսեալ էին »։ Ըստ հին հեթանոս սովորութեան, անոնց անկիրթ և բարբարոս մտքերն՝ զիցարանական առասպելաց և զիցաշնական երգոց և վիպասանութեանց հետամուտք և սիրողք էին. գաղտնի կերպով կը կատարէին նաեւ իրենց հին պիղծ և անառակ սովորութիւնները։ Իսկ այն արտունջներն, թէ անկատար կերպով ըմբռներ էին քարոզուած վարդապետութիւնները, կը ցուցնենք մէջ որչափ սակաւ զարգացումն ըրեր էր անոնց մէջ քրիստոնէութիւնն։ Մի անգամ միայն Գրիգոր իւր վարդապետութիւնները

1. Աբաթ ձԸ. էջ 587. հրատ. Վենետիկ. 1862.

2. Փաւստ. Գ. Գ. էջ 8.

3. Փաւստ. Գ. Գ. էջ 8.

4. Հեղինակն շատ հջութեամբ անձ-person կը թարգմանէ այս բառը, որ փառանձեմի համար դրուած է։ Ե. Թ.

5. Փաւստ. Գ. Գ. էջ 159.

6. Փաւստ. Ե. Լ. էջ 245. — Աշտիկներու մասին նման Մովս. Խոր. Ա. ԺԳ, & Langlois Coll. I, S. 26, N. 1. — (Հմտ. նոյնպէս ՀԲ հատոր 2-րդ, 2. Գ. Վ. Աշտիկ, հրատ. Վենետիկ. 1895. էջ 177-9. — Ե. Թ.)

1. Մով. Հայկ. ԺԱ. էջ 8.

2. Փաւստ. Գ. ԺԳ, էջ 32-35.

հին բնիկ հայկական լեզուով բացատրեց կամ քարոզեց¹ : Իրեն յաջորդաց մէջ էին ան- նշան որդիքն և ղեռահասակ թոռն : Նոյն ժամանակաց վարդապետը կամ ասորի² էին , ինչպէս էր հռչակաւորն Դանիէլ , և կամ յոյնք , որոնք ընդհանրապէս չէին կրնար երկրին բնիկ լեզուով խօսիլ և կամ շատ անկատար կերպով³ : Եկեղեցական լեզուն ևս կամ ասորերէն էր և կամ յունարէն⁴ : Այսպէս ուրեմն քրիստոնէութիւնն սեփական- նութիւնն եղաւ գիտնական դասակարգին , որ է՝ այլևայլ լեզուներ գիտողներուն միայն : Այսպիսի պարագայից մէջ գիրաւ կը հաս- կըցուի թէ Ինչպէս հին գիցագնական երգերն

և կրօնական հանդէսք անփոփոխ պահեցին իրենց ազդեցութիւնը խառնադանձ ժողովրդ- ղեան մէջ :

Յայտնի է թէ կրօնք մի , որ նոյն իսկ ներսը այսչափ սակաւ արմատացեր էր , չէր կարող զարգանալ կամ տարածուիլ զուրաբ : Երբոր Աղուանից պատանի կաթողիկոսն Գրի- զորիս , վրթանեսի որդին , կ'աշխատէր զար- ձուենել ի քրիստոնէութիւն Մազքթաց¹ — հիւսիսային ասպատակաւորաց — թագաւորը² , նա չի կարենալով համոզուիլ և հաւանիլ ֆրիս- տոսի խաղաղարար օրինաց , կ'ըսէ . « Զի ոչ յափշտակեցուք , զի ոչ աւարեսցուք , զի ոչ առցուք զայլոյ , քէ կեցցուք այսչափ ան- չափ զօրաց բազմութիւնք » : Թագաւորն կաս- կածելով թէ նորա առաքելութեան մէջ հայ թագաւորին քաղաքական հնարագիտութիւն մի լինի , սպաննել տուաւ զհայրապետն : Շարայայարելի

1. Ագաթ. Ա. ՃԻԳ, էջ 492. « Հայրաբար նայե- րէնախօս գտաւ » . (իսկ մեր հրատարակութիւնն ունի , էջ 637. « Սոյնպէս և սա եկեալ նասեալ երեւալ հո- րաբար նայերէնախօս գտաւ » . — Մ. Թ.) .

2. Երբեմն այս վարդապետք մտուցեր են զարեւել Նորորիակ կամ անծանօթ հեթանոսութիւն մի . իսկի- փան Աղէնեաց երկրին մէջ կ'արգելու ձուկ ուտելը , զոր կը յարգէին Ասորիք : Փաւստ . Ե . Իէ :

3. Հաւանականաբար տեղւոյն բնիկ լեզուն զգիտ- նալն եղաւ պատճառ , որով ամենեւին արդիւնք չունե- ցաւ Ս . Յակոբ Մթնացւոյ առաքելութիւնն ի Ռշտու- նիս՝ նարաւային Հայաստանի մէջ : Փաւստ . Գ . Ժ :

4. Առաջնոյն համար կը վկայէ փարպեցի Ի . էջ 34 . իսկ վերջնոյն համար Մ . Խոր . Գ . ԼԶ :

1. Նոյն են սղաւ Հոնաց ևս , ըստ վկայութեան Փաւստոսի . « Եւ երթեալ յանդիման լինէր թագաւորին Մազքթաց , իշխանին ըազմութեան զօրացն Հոնաց » : Փաւստ . Գ . 2 , էջ 14 .

2. Սա ցեղով որչափուի էր , ևնահաբար ազգակից հայ թագաւորաց , և կը կոչուէր Սանեսան : Փաւստ . Գ . 2 , էջ 14 .

Մ . Թ .

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿԱՈՒԹԻՒՆԷ

Եմորհակալութեամբ ստացամք ազգային հետեւեալ մոր հրատարակուած գրեամբը :

1 Երրակի Լեզունդաներից եւ Ժողովրդական կեանքից . — գրեց՝ Յովհաննէս Կոստա- նեանց 1896 , տպեալ յԱղեքսանդրապոլ , տպարան Ա . Մ . Մայիսանեան . գինն է 30 կոպ . Երախում է ամենայն տեղ զրաւանաւանդներում :

2 Հնութիւնք Ալիայ . — Յ . Կ . Ճանիկեան (Թիֆլիսի Հայոց Հրատարակչական ընկերու- թիւն N° 89) , 1895 , տպեալ ի Թիֆլիս . տպարան Մ . Գ . Ռատինեանցի . գինն է 2 բուրի :

3 Տուրիստի յիշորութիւններ (պատկերներ , պատկերներ և այլն) . Վ . Փափազեան 1896 , տպեալ ի Թիֆլիս . տպարան Մ . Գ . Ռատինեանցի . վաճառուած է կենտր . գրաւաճառա- ցում . գինն է 40 կոպ .

4 Գետնափորի երախաներ . Վլ . Կօրոյենկոյ (Թրգմ . տաւերենից) , (Թիֆլիսի Հայոց Հրա- տարակչական ընկերութիւն N° 104) , 1896 , տպեալ ի Թիֆլիս , տպարան Յովհաննէս Մար- տիրոսեանցի . գինն է 15 կոպ .

5 Ալամայ մարդկապան . Վլադիմիր Կօրոյենկո , Թրգմ . Յ . Յովհաննիսեան (Թիֆլիսի Հայոց Հրատարակչական ընկերութիւն N° 106) , 1896 , տպեալ ի Թիֆլիս , տպարան Մ . Գ . Ռատինեանցի .